

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

---

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ

2018 ԹՎԱԿԱՆԻՆ

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ 1100-101

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Համախառն ներքին արդյունքը և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն, 2013-2018թթ.(ընթացիկ գներով)	3
Համախառն ներքին արդյունքը 2018թ.	4
Համախառն ներքին արդյունքն 2018թ. ըստ եռամսյակների	6
Համախառն ներքին արդյունքի հաշվարկն արտադրական եղանակով 2018թ.	9
Համախառն ներքին արդյունքի հաշվարկը եկամուտների ձևավորման եղանակով 2018թ.	11
Հավելված 1	
<b>2016</b>	
Համախառն ներքին արդյունքն արտադրական եղանակով ըստ ՏԳՏԴ խմբ. 2	13
Համախառն ներքին արդյունքի կառուցվածքն ըստ ՏԳՏԴ խմբ. 2	14
Արտադրության հաշիվն ըստ եռամսյակների	15
Եկամուտների ձևավորման հաշիվն ըստ եռամսյակների	15
<b>2017</b>	
Համախառն ներքին արդյունքն արտադրական եղանակով ըստ ՏԳՏԴ խմբ. 2	16
Համախառն ներքին արդյունքի կառուցվածքն ըստ ՏԳՏԴ խմբ. 2	17
Արտադրության հաշիվն ըստ եռամսյակների	18
Եկամուտների ձևավորման հաշիվն ըստ եռամսյակների	18
<b>2018</b>	
Համախառն ներքին արդյունքն արտադրական եղանակով ըստ ՏԳՏԴ խմբ. 2	19
Համախառն ներքին արդյունքի կառուցվածքն ըստ ՏԳՏԴ խմբ. 2	20
Արտադրության հաշիվն ըստ եռամսյակների	21
Եկամուտների ձևավորման հաշիվն ըստ եռամսյակների	21
Եռամսյակային ազգային հաշիվների ամփոփ ցուցանիշը	22
Համախառն ներքին արդյունքն օգտագործման (ծախսային) եղանակով 2017-2018թթ.	23
Հավելված 2	
Մեթոդաբանական ցուցումներ	25

*Առանձին դեպքերում բաղադրիչների գումարի և արդյունքի միջև աննշան տարբերությունները բացատրվում են սվյալների կլորացմամբ:*

**Պայմանական նշաններ**

սվյալները բացակայում են	--
երևույթը բացակայում է	-
չնչին մեծություն	0.0
սվյալները ճշտված են	#


**Համախառն ներքին արդյունքը և մշտական բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն, 2013-2018թթ. (ընթացիկ գներով)**

Տարիներ	ՀՆԱ		ՀՆԱ-ն բնակչության մեկ շնչի հաշվով		Տեղեկատու	
	մլն դրամ	հազ. ԱՄՆ դոլար	հազ. դրամ <sup>1</sup>	ԱՄՆ դոլար	դոլար/դրամ միջին տարեկան փոխարժեքը	մշտական բնակչության թվաքանակը, հազ. մարդ
2013	168563.6	411502.1	1174.7	2867.7	409.63	143.5
2014	188840.3	454030.3	1308.7	3146.5	415.92	144.6
2015	209345.7	438035.0	1443.8	3021.0	477.92	145.1
2016	229651.6	477952.9	1577.3	3282.7	480.49	146.1
2017	272070.8	563620.3	1855.9	3844.7	482.72	147.0
2018	310252.7	642358.4	2103.3	4354.7	482.99	148.0

<sup>1</sup> Յուզանիշը հաշվարկված է ԱՀ մշտական բնակչության միջին տարեկան թվաքանակի հիման վրա:

## Համախառն ներքին արդյունքը 2018թ.

2018թ. Արցախի Հանրապետության համախառն ներքին արդյունքը շուկայական գներով կազմել է 310252.7մլն դրամ: ՀՆԱ-ի աճի տեմպը կազմել է 111.9 տոկոս, ՀՆԱ-ի ինդեքս-դեֆլյատորը՝ 101.9 տոկոս:




### Գծապատկեր 1: Համախառն ներքին արդյունքի աճի տեմպը 1997-2018թթ. (տոկոսներով՝ նախորդ տարվա նկատմամբ)

ՀՆԱ-ի արձանագրված 11.9 տոկոս հավելվածի տեմպի 7.2 տոկոսային կետն ապահովել է արդյունաբերությունը, ներառյալ էներգետիկան, 2.8 տոկոսային կետը՝ առևտուր և ծառայությունները, 1.3 տոկոսային կետը՝ շինարարությունը:

Համախառն ներքին արդյունք  
Համախառն ներքին արդյունքը 2017-2018թթ.

	2017թ.	2018թ.	/մլն դրամ/ Իրական աճի տեմպը (տոկոսներով)
<b>Համախառն ներքին արդյունք</b>	<b>272070.8</b>	<b>310252.7</b>	<b>111.9</b>
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)	14027.6	19100.8	106.3
Ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով)	258043.2	291151.9	112.2
Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ (-)	-13940.2	-12633.8	89.7
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	33539.2	33943.1	97.3
Արդյունաբերություն, ներառյալ էներգետիկան	67873.0	88532.1	128.8
Շինարարություն	26640.2	29699.5	113.7
Առևտուր և ծառայություններ	143931.0	151611.0	105.3



**Գծապատկեր 2: Տնտեսական գործունեության տեսակների խոշոր խմբավորումների (ՏԳՏԴ խմբ.2) իրական աճի տեմպերը (տոկոսներով՝ 2017թ. նկատմամբ)**

Ըստ տնտեսական գործունեության տեսակների 2018թ. 2017թ. նկատմամբ ավելացված արժեքի իրական աճ գրանցվել է սպասարկման այլ ծառայություններում՝ 70.0 տոկոս, մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտում՝ 43.5 տոկոս, հանրագործական արդյունաբերությունում և բացահանքերի շահագործումում՝ 36.1 տոկոս, մշակող արդյունաբերությունում՝ 27.7 տոկոս:

Համախառն ներքին արդյունք

2018թ. ՀՆԱ-ի գերակշռող մասը՝ 83.0 տոկոսը, ստեղծվել է մասնավոր հատվածում՝ 2017թ. 82.8 տոկոսի դիմաց: ՀՆԱ-ի մասնավոր հատվածի 20.1 տոկոսը կազմում է հանքագործական արդյունաբերությունը և բացահանքերի շահագործումը, 17.7 տոկոսը՝ շինարարությունը, 13.2 տոկոսը՝ գյուղատնտեսությունը, անտառային տնտեսությունը և ձկնորսությունը, 10.2 տոկոսը՝ ֆինանսական և ապահովագրական գործունեությունը:


2018թ. ՀՆԱ-ի մոտ 41.0 տոկոսն ստեղծվել է փոքր և միջին ձեռնարկությունների կողմից՝ 2017թ. 40.8 տոկոսի փոխարեն:

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն հանրապետությունում 2018թ. կազմել է 2103.3 հազ. դրամ, 4354.7 ԱՄՆ դոլար կամ 3685.3 Եվրո՝ 2017թ. 1855.9 հազ. դրամի կամ 3844.7 ԱՄՆ դոլարի և 3403.8 Եվրոյի փոխարեն:

**Համախառն ներքին արդյունքը 2018թ. ըստ եռամսյակների**

2018թ. արտադրված տարեկան ՀՆԱ-ն ունի հետևյալ եռամսյակային կառուցվածքը՝ առաջին եռամսյակ՝ 16.7 տոկոս (2017թ.՝ 15.9 տոկոս), երկրորդ եռամսյակ՝ 22.3 տոկոս (21.7 տոկոս), երրորդ եռամսյակ՝ 24.7 տոկոս (26.5 տոկոս) և չորրորդ եռամսյակ՝ 36.3 տոկոս (35.9 տոկոս):

Համախառն ներքին արդյունքի արտադրության եռամսյակային տվյալների վերլուծությունից պարզվում է, որ ՀՆԱ-ի գերակշռող մասն արտադրվում է երրորդ և չորրորդ եռամսյակներում:



**Գծապատկեր 3: Տնտեսական գործունեության տեսակների խոշոր խմբավորումների (ՏԳՏԴ խմբ.2) ավելացված արժեքների դինամիկան 2017-2018թթ. (հազ.դրամ)**

Համախառն ներքին արդյունք

2018թ. երկրորդ կիսամյակում արտադրվել է ՀՆԱ-ի 61.0 տոկոսը, իսկ 2017թ.՝

62.4 տոկոսը: Այս երևույթը հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության, շինարարության, մեծածախ և մանրածախ առևտրի, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգման ճյուղերի սեզոնայնությամբ: Այսպես, եթե 2018թ. առաջին կիսամյակում այս ճյուղերի ավելացված արժեքների հանրագումարի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ կազմել է 19.8 տոկոս (այդ թվում գյուղատնտեսությանը՝ 10.5 տոկոս), ապա չորրորդ եռամսյակում՝ 31.7 տոկոս (այդ թվում գյուղատնտեսությանը՝ 12.4 տոկոս): 2017թ. նշված ճյուղերի հանրագումարի տեսակարար կշիռը առաջին կիսամյակում կազմել է 23.2 տոկոս (այդ թվում գյուղատնտեսությանը՝ 12.5 տոկոս), իսկ չորրորդ եռամսյակում՝ 32.5 տոկոս (այդ թվում գյուղատնտեսությանը՝ 13.7 տոկոս):


*Համախառն ներքին արդյունքն ըստ եռամսյակների*

*/ րնթացիկ գներով, մլն դրամ /*

	I	II	III	IV	Տարի	Իրական աճի տեմպը (տոկոսներով)
ՀՆԱ	<b>51729.5</b>	<b>69219.7</b>	<b>76665.7</b>	<b>112637.8</b>	<b>310252.7</b>	<b>111.9</b>
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)	5105.2	3863.4	5157.3	4974.9	19100.8	106.3
Ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով)	46624.3	65356.3	71508.4	107662.9	291151.9	112.2
Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ (-)	-3299.4	-2360.6	-4515.3	-2458.5	-12633.8	89.7
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	2470.4	10191.9	7309.9	13970.9	33943.1	97.3
Արդյունաբերություն, ներառյալ էներգետիկան	15061.9	20758.1	22246.7	30465.4	88532.1	128.8
Շինարարություն	3488.6	4650.9	4302.6	17257.4	29699.5	113.7
Առևտուր և ծառայություններ	28902.8	32116.0	42164.5	48427.7	151611.0	105.3

Համախառն ներքին արդյունք

Գիտարկելով ՀՆԱ-ի դինամիկան եռամսյակների կտրվածքով նկատում ենք, որ ՀՆԱ-ի իրական աճը պայմանավորված է հիմնական բաղադրիչների աճերով:



**Գծապատկեր 4: ՀՆԱ-ի և նրա հիմնական բաղադրիչների դինամիկան 2017-2018թթ. (մլն դրամ)**

Ընդհանուր առմամբ, համախառն շահույթի և համախառն խառն եկամտի դինամիկան հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսության առանձնահատկություններով: Այսպես, քանի որ գյուղատնտեսության համախառն արտադրանքի գերակշռող մասն արտադրվում է տնային տնտեսություններում, որոնց ստացած եկամուտը գրեթե լրիվությամբ հանդիսանում է խառն եկամուտ, ապա արտադրության ծավալների փոփոխությունը բերում է շահույթի և խառն եկամտի գրեթե նմանօրինակ շարժերի:

Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության աճը 2018թ. 2017թ. նկատմամբ պայմանավորված է տարբեր ոլորտներում աշխատանքի վարձատրության աճով:

Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության ամենաբարձր կշիռը ինչպես նախորդ տարիներին 2018թ. ևս դիտվել է չորրորդ եռամսյակում՝ ամբողջ տարվա աշխատանքի վարձատրության 35.4 տոկոսը:

Ինչ վերաբերում է արտադրության այլ գուտ հարկերի փոփոխությանը, ապա այն կախված չէ արտադրության ծավալների փոփոխություններից՝ կապված տվյալ խմբի մեջ մտնող հարկատեսակների բնույթից: Նախորդ տարվա համեմատ այս ցուցանիշը աճել է 6.5 տոկոսով: 2018թ. բոլոր եռամսյակների ընթացքում բացառությամբ երկրորդ եռամսյակի տեղի է ունեցել արտադրության այլ գուտ հարկերի աճ:



## Համախառն ներքին արդյունքի հաշվարկն արտադրական եղանակով 2018թ.

Արտադրական եղանակով ՀՆԱ-ն տնտեսության ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների գումարն է, որի ծավալը ձևավորվում է որպես արտադրանքի թողարկման և միջանկյալ սպառման տարբերություն, ընդ որում ՀՆԱ-ն հաշվարկվում է շուկայական գներով, այսինքն՝ գումարվում են նաև արտադրանքի (առանց սուբսիդիաների) հարկերը:

### Արտադրության հաշիվ

/ընթացիկ գներով, մլն դրամ/


	2017թ.	2018թ.
<b>Ռեսուրսներ</b>		
Համախառն թողարկում	458000.9	490687.0
Արտադրանքի հարկեր	16863.8	22390.0
Արտադրանքի սուբսիդիաներ (-)	2836.2	3289.2
<b>Ընդամենը</b>	<b>472028.5</b>	<b>509787.8</b>
<b>Օգտագործում</b>		
Միջանկյալ սպառում	199957.7	199535.1
Համախառն ներքին արդյունք	272070.8	310252.7
<b>Ընդամենը</b>	<b>472028.5</b>	<b>509787.8</b>

Համախառն թողարկումը հանդիսանում է ռեսուրսների ստեղծման գլխավոր աղբյուրը: 2018թ. համախառն թողարկումը կազմել է 490687.0 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 7.1 տոկոսով կամ 32686.1 մլն դրամով, որը հիմնականում սպասարկման այլ ծառայությունների, մշակող արդյունաբերության, անշարժ գույքի հետ կապված գործունեության, հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման թողարկման ավելացման արդյունք է:

2018թ. համախառն թողարկման կառուցվածքում նախորդ տարվա համեմատ տեղի է ունեցել միջանկյալ սպառման տեսակարար կշռի նվազում 3.0 տոկոսային կետով՝ հիմնականում պայմանավորված մշակույթի, զվարճությունների, հանգստի, ֆինանսական և ապահովագրական գործունեության, վարչական և օժանդակ գործունեության միջանկյալ սպառման տեսակարար կշիռների նվազմամբ:

**Համախառն ներքին արդյունք**

Ավելացված արժեքի տեսակարար կշռի աճը համախառն թողարկման մեջ հետևանք է 27.8 տոկոսային կետով մշակույթի, գվարձությունների, հանգստի, 8.7 տոկոսային կետով՝ ֆինանսական և ապահովագրական գործունեության, 6.1 տոկոսային կետով՝ վարչական և օժանդակ գործունեության ավելացված արժեքների տեսակարար կշիռների աճի:



**Գծապատկեր 5: Տնտեսական գործունեության տեսակների խոշոր խմբավորումների (ՏԳՏԴ խմբ.2) միջանկյալ սպառման տեսակարար կշիռները համախառն թողարկման մեջ 2017-2018թթ. (տոկոսներով)**

Կառուցվածքային տեսանկյունից ավելացված արժեքը 2018թ. կազմել է ՀՆԱ-ի 93.8 տոկոսը՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 1.0 տոկոսային կետով: Միևնույն ժամանակ աճել է արտադրանքի հարկերի ավելացված արժեքի տեսակարար կշիռը՝ 1.0 տոկոսային կետով: Այն գլխավորապես պայմանավորված է ակցիզային հարկի, ավելացված արժեքի հարկի, հաստատագրված վճարի և առևտրի հարկի գումարների աճով՝ համապատասխանաբար 42.0, 34.2, 30.3 և 9.4 տոկոսներով:

**Համախառն ներքին արդյունքի կառուցվածքը**

/տոկոսներով՝ ՀՆԱ-ի նկատմամբ/

	2017թ.	2018թ.
<b>Համախառն ներքին արդյունք</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)	5.2	6.2
Ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով)	94.8	93.8
Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ (-)	-5.1	-4.1
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	12.3	10.9
Արդյունաբերություն, ներառյալ էներգետիկան	24.9	28.5
Շինարարություն	9.8	9.6
Առևտուր և ծառայություններ	52.9	48.9

## Համախառն ներքին արդյունքի հաշվարկը եկամուտների ձևավորման եղանակով 2018թ.


Եկամուտների ձևավորման եղանակով ՀՆԱ-ի հաշվարկը արտացոլում է ապրանքների և ծառայությունների արտադրությանն անմիջականորեն մասնակցող կառուցվածքային միավորների կողմից վճարած սկզբնական եկամուտները:

Ըստ եկամուտների ձևավորման ՀՆԱ-ի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2018թ. նախորդ տարվա համեմատ աշխատանքի վարձատրությունն աճել է 10.1 տոկոսով, իսկ համախառն շահույթն ու համախառն խառն եկամուտը՝ 15.4 տոկոսով, ընդ որում՝ հիմնական միջոցների օգտագործումն աճել է 22.3 տոկոսով, իսկ զուտ շահույթ ու զուտ խառն եկամուտը՝ 12.0 տոկոսով:

### Եկամուտների ձևավորման հաշիվ

	<i>/ ընթացիկ գներով մլն դրամ /</i>	
	2017թ.	2018թ.
<b>Ռեսուրսներ</b>		
Համախառն ներքին արդյունք	272070.8	310252.7
<b>Ընդամենը</b>	<b>272070.8</b>	<b>310252.7</b>
<b>Օգտագործում</b>		
Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն	125209.3	137851.3
Արտադրանքի հարկեր	14027.6	19100.8
Արտադրության այլ հարկեր	326.0	347.2
Համախառն շահույթ և համախառն խառն եկամուտ	132507.9	152953.4
այդ թվում՝		
հիմնական միջոցների օգտագործում	44424.9	54320.2
զուտ շահույթ և զուտ խառն եկամուտ	88083.0	98633.2
<b>Ընդամենը</b>	<b>272070.8</b>	<b>310252.7</b>

## Համախառն ներքին արդյունք



### Գծապատկեր 6: ՀՆԱ-ի կառուցվածքն ըստ եկամուտների ձևավորման (%)

2018թ. ՀՆԱ-ի՝ ըստ եկամուտների ձևավորման կառուցվածքի մեջ վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության տեսակարար կշիռը կազմել է 44.4 տոկոս և 2017թ. համեմատ նվազել է 1.6 տոկոսային կետով, արտադրանքի հարկերի տեսակարար կշիռը աճել է 1.0 տոկոսային կետով, իսկ համախառն շահույթի և համախառն խառն եկամտի տեսակարար կշիռը՝ 0.6 տոկոսային կետով:

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

*Մակրոտնտեսական ցուցանիշների, ազգային հաշիվների և ֆինանսների վիճակագրության բաժին  
հեռ.՝ (047) 94-46-23*

Համախառն ներքին արդյունքն արտադրական եղանակով  
ըստ ՏԳՏԴ խմբ. 2 (2016թ.)

/ընթացիկ գներով, մլն դրամ/

	Համախառն թողարկում	Միջանկյալ սպառում	Համախառն ավելացված արժեք
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	75781.1	45478.6	30302.5
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	17119.6	4580.5	12539.1
Մշակող արդյունաբերություն	19932.0	12003.8	7928.2
Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	21250.5	3619.5	17631.0
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	697.4	94.5	602.9
Շինարարություն	45655.8	19218.6	26437.2
Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում	17377.7	15639.9	1737.8
Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	5456.7	4145.8	1310.9
Կացության և հանրային սննդի կազմակերպում	2499.3	1884.4	614.9
Տեղեկատվություն և կապ	9135.4	2169.9	6965.5
Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	42205.7	21272.3	20933.4
Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	2277.7	988.8	1288.9
Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	3682.7	2358.2	1324.5
Վարչարարական և օժանդակ գործունեություն	2907.9	1291.2	1616.7
Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովություն	68939.2	1387.5	67551.7
Կրթություն	18143.5	745.9	17397.6
Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	13124.6	1775.4	11349.2
Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	3539.3	1180.4	2358.9
Սպասարկման այլ ծառայություններ	697.2	240.0	457.2
Տնային տնտեսությունների գործունեություն որպես գործատու, տնային տնտեսություններում չտարբերակված ապրանքների և ծառայությունների արտադրություն սեփական սպառման համար	578.6	0.0	578.6
Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ (-)		11051.8	-11051.8
<b>Ընդամենը</b>	<b>371001.9</b>	<b>151127</b>	<b>219874.9</b>
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)			9776.7
<b>Համախառն ներքին արդյունք</b>			<b>229651.6</b>

Համախառն ներքին արդյունք

Համախառն ներքին արդյունքի կառուցվածքն ըստ ՏԳՏԴ խմբ. 2 (2016թ.)

/տոկոսներով ընդամենի նկատմամբ/

	Համախառն թողարկում	Միջանկյալ սպառում	Համախառն ավելացված արժեք
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	20.4	30.1	13.2
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	4.6	3.0	5.5
Մշակող արդյունաբերություն	5.4	7.9	3.4
Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	5.7	2.4	7.7
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	0.2	0.1	0.3
Շինարարություն	12.3	12.7	11.5
Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում	4.7	10.3	0.7
Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	1.5	2.7	0.6
Կացության և հանրային սննդի կազմակերպում	0.7	1.2	0.3
Տեղեկատվություն և կապ	2.5	1.4	3.0
Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	11.4	14.1	9.1
Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	0.6	0.7	0.6
Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	1.0	1.6	0.6
Վարչարարական և օժանդակ գործունեություն	0.8	0.9	0.7
Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովություն	18.6	0.9	29.4
Կրթություն	4.9	0.5	7.6
Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	3.5	1.2	4.9
Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	0.9	0.8	1.0
Սպասարկման այլ ծառայություններ	0.2	0.2	0.2
Տնային տնտեսությունների գործունեություն որպես գործատու, տնային տնտեսություններում չտարբերակված ապրանքների և ծառայությունների արտադրություն սեփական սպառման համար	0.1	0.0	0.2
Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ (-)		7.3	-4.8
<b>Ընդամենը</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>95.7</b>
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)			4.3
<b>Համախառն ներքին արդյունք</b>			<b>100.0</b>

Համախառն ներքին արդյունք

Արտադրության հաշիվն ըստ եռամսյակների (2016թ.)

/ընթացիկ գներով, մլն դրամ/

	I	II	III	IV	Տարի
<b>Ռեսուրսներ</b>					
Համախառն թողարկում	73020.1	74615.9	106966.0	116399.9	371001.9
Արտադրանքի հարկեր	1724.8	2298.3	3748.6	4669.5	12441.2
Արտադրանքի սուբսիդիաներ (-)	256.4	564.4	237.7	1606.0	2664.5
<b>Ընդամենը</b>	<b>74488.5</b>	<b>76349.8</b>	<b>110476.9</b>	<b>119463.4</b>	<b>380778.6</b>
<b>Օգտագործում</b>					
Միջանկյալ սպառում	36244.8	26862.10	52171.8	35848.3	151127.0
Համախառն ներքին արդյունք	38243.7	49487.7	58305.1	83615.1	229651.6
Ֆինանսական միջնորդության անուղ- ղակիորեն չափվող ծառայություններ (-)	-2579.9	-2756.3	-2721.3	-2994.3	-11051.8
Արտադրանքի հարկեր	1724.8	2298.3	3748.6	4669.5	12441.2
Արտադրանքի սուբսիդիաներ (-)	256.4	564.4	237.7	1606.0	2664.5
<b>Ընդամենը</b>	<b>74488.5</b>	<b>76349.8</b>	<b>110476.9</b>	<b>119463.4</b>	<b>380778.6</b>

Եկամուտների ձևավորման հաշիվն ըստ եռամսյակների (2016թ.)

/ընթացիկ գներով, մլն դրամ/

	I	II	III	IV	Տարի
<b>Ռեսուրսներ</b>					
Համախառն ներքին արդյունք	38243.7	49487.7	58305.1	83615.1	229651.6
<b>Ընդամենը</b>	<b>38243.7</b>	<b>49487.7</b>	<b>58305.1</b>	<b>83615.1</b>	<b>229651.6</b>
<b>Օգտագործում</b>					
Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն	26148.0	23760.1	27448.7	37186.9	114543.7
Հիմնական միջոցների օգտագործում	3735.6	4811.7	8470.6	14628.7	31646.6
Զուտ շահույթ և զուտ խառն եկամուտ	6836.5	19142.3	18813.2	28586.0	73378.0
Ֆինանսական միջնորդության անուղ- ղակիորեն չափվող ծառայություններ (-)	-2579.9	-2756.3	-2721.3	-2994.3	-11051.8
Արտադրության այլ զուտ հարկեր	55.2	39.6	61.7	150.1	306.6
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)	1468.4	1734.0	3510.9	3063.4	9776.7
<b>Ընդամենը</b>	<b>38243.7</b>	<b>49487.7</b>	<b>58305.1</b>	<b>83615.1</b>	<b>229651.6</b>

Համախառն ներքին արդյունք  
 Համախառն ներքին արդյունքն արտադրական եղանակով  
 ըստ ՏԳՏԴ խմբ. 2 (2017թ.)

/ընթացիկ գներով, մլն դրամ/

	Համախառն թողարկում	Միջանկյալ սպառում	Համախառն ավելացված արժեք
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	84599.8	51060.6	33539.2
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	52059.9	13399.8	38660.1
Մշակող արդյունաբերություն	20812.9	12536.7	8276.2
Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	23667.0	3552.7	20114.3
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	950.8	128.4	822.4
Շինարարություն	48224.2	21584.0	26640.2
Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում	37423.8	35423.0	2000.8
Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	14141.1	12441.1	1700.0
Կացության և հանրային սննդի կազմակերպում	2926.0	2227.3	698.7
Տեղեկատվություն և կապ	8718.9	1384.8	7334.1
Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	44575.9	18976.4	25599.5
Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	5611.3	3860.2	1751.1
Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	2456.4	1153.9	1302.5
Վարչարարական և օժանդակ գործունեություն	2714.9	615.8	2099.1
Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովություն	70311.2	2109.3	68201.9
Կրթություն	19565.0	1728.3	17836.7
Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	13814.8	2366.1	11448.7
Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	3777.6	1267.0	2510.6
Սպասարկման այլ ծառայություններ	658.6	202.1	456.5
Տնային տնտեսությունների գործունեություն որպես գործատու, տնային տնտեսություններում չտարբերակված ապրանքների և ծառայությունների արտադրություն սեփական սպառման համար	990.8	0.0	990.8
Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ (-)		13940.2	-13940.2
<b>Ընդամենը</b>	<b>458000.9</b>	<b>199957.7</b>	<b>258043.2</b>
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)			14027.6
<b>Համախառն ներքին արդյունք</b>			<b>272070.8</b>



Համախառն ներքին արդյունք  
 Համախառն ներքին արդյունքի կառուցվածքն ըստ ՏԳՏԴ խմբ. 2 (2017թ.)

/տոկոսներով ընդամենի նկատմամբ/

	Համախառն թողարկում	Միջանկյալ սպառում	Համախառն ավելացված արժեք
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	18.5	25.5	12.3
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	11.4	6.7	14.2
Մշակող արդյունաբերություն	4.5	6.3	3.0
Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	5.2	1.8	7.4
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	0.2	0.1	0.3
Շինարարություն	10.5	10.8	9.8
Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում	8.2	17.7	0.7
Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	3.1	6.2	0.6
Կացության և հանրային սննդի կազմակերպում	0.6	1.1	0.3
Տեղեկատվություն և կապ	2.0	0.7	2.7
Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	9.7	9.5	9.4
Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	1.2	1.9	0.6
Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	0.5	0.6	0.5
Վարչարարական և օժանդակ գործունեություն	0.6	0.3	0.8
Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովություն	15.4	1.0	25.1
Կրթություն	4.3	0.9	6.5
Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	3.0	1.2	4.2
Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	0.8	0.6	0.9
Սպասարկման այլ ծառայություններ	0.1	0.1	0.2
Տնային տնտեսությունների գործունեություն որպես գործատու, տնային տնտեսություններում չտարբերակված ապրանքների և ծառայությունների արտադրություն սեփական սպառման համար	0.2	0.0	0.4
Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ (-)		7.0	-5.1
<b>Ընդամենը</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>94.8</b>
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)			5.2
<b>Համախառն ներքին արդյունք</b>			<b>100.0</b>

Համախառն ներքին արդյունք  
Արտադրության հաշիվն ըստ եռամսյակների (2017թ.)

/ընթացիկ գներով, մլն դրամ/

	I	II	III	IV	Տարի
<b>Ռեսուրսներ</b>					
Համախառն թողարկում	78297.3	118861.7	130361.3	130480.6	458000.9
Արտադրանքի հարկեր	2330.8	2851.2	5185.4	6496.4	16863.8
Արտադրանքի սուբսիդիաներ (-)	725.2	559.8	521.3	1029.9	2836.2
<b>Ընդամենը</b>	<b>79902.9</b>	<b>121153.1</b>	<b>135025.4</b>	<b>135947.1</b>	<b>472028.5</b>
<b>Օգտագործում</b>					
Միջանկյալ սպառում	36590.9	62221.8	62980.0	38165.0	199957.7
Համախառն ներքին արդյունք	43312.0	58931.3	72045.4	97782.1	272070.8
Ֆինանսական միջնորդության անուղ- ղակիորեն չափվող ծառայություններ (-)	-3284.0	-3319.5	-3836.4	-3500.3	-13940.2
Արտադրանքի հարկեր	2330.8	2851.2	5185.4	6496.4	16863.8
Արտադրանքի սուբսիդիաներ (-)	725.2	559.8	521.3	1029.9	2836.2
<b>Ընդամենը</b>	<b>79902.9</b>	<b>121153.1</b>	<b>135025.4</b>	<b>135947.1</b>	<b>472028.5</b>

Եկամուտների ձևավորման հաշիվն ըստ եռամսյակների (2017թ.)

/ընթացիկ գներով, մլն դրամ/

	I	II	III	IV	Տարի
<b>Ռեսուրսներ</b>					
Համախառն ներքին արդյունք	43312.0	58931.3	72045.4	97782.1	272070.8
<b>Ընդամենը</b>	<b>43312.0</b>	<b>58931.3</b>	<b>72045.4</b>	<b>97782.1</b>	<b>272070.8</b>
<b>Օգտագործում</b>					
Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն	27650.2	26005.2	30329.0	41224.9	125209.3
Հիմնական միջոցների օգտագործում	6866.6	7479.0	12986.9	17092.4	44424.9
Զուտ շահույթ և զուտ խառն եկամուտ	7141.5	23104.6	24000.2	33836.7	88083.0
Ֆինանսական միջնորդության անուղ- ղակիորեն չափվող ծառայություններ (-)	-3284.0	-3319.5	-3836.4	-3500.3	-13940.2
Արտադրության այլ զուտ հարկեր	48.1	51.1	65.2	161.6	326.0
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)	1605.6	2291.4	4664.1	5466.5	14027.6
<b>Ընդամենը</b>	<b>43312.0</b>	<b>58931.3</b>	<b>72045.4</b>	<b>97782.1</b>	<b>272070.8</b>

Համախառն ներքին արդյունք  
 Համախառն ներքին արդյունքն արտադրական եղանակով  
 ըստ ՏԳՏԴ խմբ. 2 (2018թ.)

/ընթացիկ գներով, մլն դրամ/

	Համախառն թողարկում	Միջանկյալ սպառում	Համախառն ավելացված արժեք
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	82250.6	48307.5	33943.1
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	69293.9	17440.0	51853.9
Մշակող արդյունաբերություն	28384.0	15620.0	12764.0
Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	26464.5	3077.0	23387.5
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	863.3	336.7	526.6
Շինարարություն	52504.7	22805.2	29699.5
Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում	39114.4	37043.5	2070.9
Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	11785.3	9878.1	1907.2
Կացության և հանրային սննդի կազմակերպում	3514.0	2688.3	825.7
Տեղեկատվություն և կապ	8918.3	1419.3	7499.0
Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	39896.3	13522.7	26373.6
Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	7537.6	5687.0	1850.6
Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	2695.4	1262.5	1432.9
Վարչարարական և օժանդակ գործունեություն	2964.0	490.4	2473.6
Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովություն	75199.6	3008.0	72191.6
Կրթություն	19518.8	1905.5	17613.3
Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	13936.0	1921.3	12014.7
Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	3908.7	225.8	3682.9
Սպասարկման այլ ծառայություններ	1032.6	262.5	770.1
Տնային տնտեսությունների գործունեություն որպես գործատու, տնային տնտեսություններում չտարբերակված ապրանքների և ծառայությունների արտադրություն սեփական սպառման համար	905.0	0.0	905.0
Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ (-)		12633.8	-12633.8
<b>Ընդամենը</b>	<b>490687.0</b>	<b>199535.1</b>	<b>291151.9</b>
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)			19100.8
<b>Համախառն ներքին արդյունք</b>			<b>310252.7</b>

Համախառն ներքին արդյունք  
 Համախառն ներքին արդյունքի կառուցվածքն ըստ ՏԳՏԴ խմբ. 2 (2018թ.)

/տոկոսներով ընդամենի նկատմամբ/

	Համախառն թողարկում	Միջանկյալ սպառում	Համախառն ավելացված արժեք
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	16.8	24.2	10.9
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	14.1	8.7	16.7
Մշակող արդյունաբերություն	5.8	7.8	4.1
Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	5.4	1.5	7.5
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	0.2	0.2	0.2
Շինարարություն	10.7	11.4	9.6
Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում	8.0	18.6	0.7
Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	2.4	5.0	0.6
Կացության և հանրային սննդի կազմակերպում	0.7	1.3	0.3
Տեղեկատվություն և կապ	1.8	0.7	2.4
Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	8.1	6.8	8.5
Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	1.5	3.0	0.6
Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	0.6	0.6	0.5
Վարչարարական և օժանդակ գործունեություն	0.6	0.2	0.8
Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովություն	15.3	1.5	23.3
Կրթություն	4.0	1.0	5.7
Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	2.8	1.0	3.9
Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	0.8	0.1	1.2
Սպասարկման այլ ծառայություններ	0.2	0.1	0.2
Տնային տնտեսությունների գործունեություն որպես գործատու, տնային տնտեսություններում չտարբերակված ապրանքների և ծառայությունների արտադրություն սեփական սպառման համար	0.2	0.0	0.2
Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ (-)		6.3	-4.1
<b>Ընդամենը</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>93.8</b>
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)			6.2
<b>Համախառն ներքին արդյունք</b>			<b>100.0</b>

Համախառն ներքին արդյունք  
Արտադրության հաշիվն ըստ եռամսյակների (2018թ.)

*/ընթացիկ գներով, մլն դրամ/*

	I	II	III	IV	Տարի
<b>Ռեսուրսներ</b>					
Համախառն թողարկում	102961.3	123682.6	139001.7	125041.4	490687.0
Արտադրանքի հարկեր	6019.5	3805.5	6241.2	6323.8	22390.0
Արտադրանքի սուբսիդիաներ (-)	914.3	-57.9	1083.9	1348.9	3289.2
<b>Ընդամենը</b>	<b>108066.5</b>	<b>127546.0</b>	<b>144159.0</b>	<b>130016.3</b>	<b>509787.8</b>
<b>Օգտագործում</b>					
Միջանկյալ սպառում	56337.0	58326.3	67493.3	17378.5	199535.1
Համախառն ներքին արդյունք	51729.5	69219.7	76665.7	112637.8	310252.7
Ֆինանսական միջնորդության անուղ- ղակիորեն չափվող ծառայություններ (-)	-3299.4	-2360.6	-4515.3	-2458.5	-12633.8
Արտադրանքի հարկեր	6019.5	3805.5	6241.2	6323.8	22390.0
Արտադրանքի սուբսիդիաներ (-)	914.3	-57.9	1083.9	1348.9	3289.2
<b>Ընդամենը</b>	<b>108066.5</b>	<b>127546.0</b>	<b>144159.0</b>	<b>130016.3</b>	<b>509787.8</b>

*Եկամուտների ձևավորման հաշիվն ըստ եռամսյակների (2018թ.)*

*/ընթացիկ գներով, մլն դրամ/*


	I	II	III	IV	Տարի
<b>Ռեսուրսներ</b>					
Համախառն ներքին արդյունք	51729.5	69219.7	76665.7	112637.8	310252.7
<b>Ընդամենը</b>	<b>51729.5</b>	<b>69219.7</b>	<b>76665.7</b>	<b>112637.8</b>	<b>310252.7</b>
<b>Օգտագործում</b>					
Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն	29706.7	26753.4	32586.8	48804.4	137851.3
Հիմնական միջոցների օգտագործում	9248.0	11120.3	13515.2	20436.7	54320.2
Զուտ շահույթ և զուտ խառն եկամուտ	7604.0	27437.0	25332.9	38259.3	98633.2
Ֆինանսական միջնորդության անուղ- ղակիորեն չափվող ծառայություններ (-)	-3299.4	-2360.6	-4515.3	-2458.5	-12633.8
Արտադրության այլ զուտ հարկեր	65.6	45.6	73.5	162.5	347.2
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)	5105.2	3863.4	5157.3	4974.9	19100.8
<b>Ընդամենը</b>	<b>51729.5</b>	<b>69219.7</b>	<b>76665.7</b>	<b>112637.8</b>	<b>310252.7</b>

**Համախառն ներքին արդյունք  
Եռամսյակային ազգային հաշիվների ամփոփ ցուցանիշը**

**Համախառն ներքին արդյունքի ծավալն ըստ եռամսյակների (ընթացիկ գներով)**


Տարիներ	ՀՆԱ	I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	Տարի
2017	մլն. դրամ	43312.0	58931.3	72045.4	97782.1	272070.8
	հազ. ԱՄՆ դոլար	89159.1	121920.1	150524.2	202408.3	563620.3
2018	մլն. դրամ	51729.5	69219.7	76665.7	112637.8	310252.7
	հազ. ԱՄՆ դոլար	107457.9	143405.0	158872.9	232094.5	642358.4

**Համախառն ներքին արդյունքի արտադրության կառուցվածքն ըստ եռամսյակների (%)**



**Համախառն ներքին արդյունքի իրական ծավալի ինդեքսներն ըստ եռամսյակների**

(իրական ծավալի ինդեքսները՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ, %)



Համախառն ներքին արդյունք

*Համախառն ներքին արդյունքն օգտագործման (ծախսային)  
եղանակով*

	/մլն դրամ /	
	2017	2018
Վերջնական սպառման ծախսեր այդ թվում՝	234528.9	254153.6
տնային տնտեսությունների պետական հիմնարկների, որոնք բավարարում են	181856.9	201389.1
այդ թվում՝	52403.5	52469.5
բնակչության անհատական պահանջմունքները	25361.7	25227.3
կոլեկտիվ պահանջմունքները	27041.8	27242.2
տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների	268.5	295.0
Համախառն կուտակում այդ թվում՝	49347.3	54482.1
հիմնական կապիտալի համախառն կուտակում	47496.2	52890.9
նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխություն	1851.1	1591.2
Ապրանքների և ծառայությունների գուտ արտահանում	-56.0	-62.3
այդ թվում՝		
արտահանում	93.7	110.8
ներմուծում	149.7	173.1
Վիճակագրական շեղում	-11749.4	1679.3
<b>Համախառն ներքին արդյունք</b>	<b>272070.8</b>	<b>310252.7</b>

*/տոկոսներով ՀՆԱ-ի նկատմամբ/*

**Համախառն ներքին արդյունք**

	2017	2018
Վերջնական սպառման ծախսեր այդ թվում՝	86.2	81.9
տնային տնտեսությունների	66.8	64.9
պետական հիմնարկների, որոնք բավարարում են այդ թվում՝	19.3	16.9
բնակչության անհատական պահանջումները	9.3	8.1
կոլեկտիվ պահանջումները	10.0	8.8
տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների	0.1	0.1
Համախառն կուտակում այդ թվում՝	18.1	17.6
հիմնական կապիտալի համախառն կուտակում	17.4	17.1
նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխություն	0.7	0.5
Ապրանքների և ծառայությունների զուտ արտահանում այդ թվում՝	0.0	0.0
արտահանում	0.0	0.0
ներմուծում	0.0	0.0
Վիճակագրական շեղում	-4.3	0.5
<b>Համախառն ներքին արդյունք</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>

*/իրական ծավալի ինդեքսները՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ, %/*

	2018
Վերջնական սպառման ծախսեր այդ թվում՝	107.4
տնային տնտեսությունների	108.8
պետական հիմնարկների, որոնք բավարարում են այդ թվում՝	100.1
բնակչության անհատական պահանջումները	99.5
կոլեկտիվ պահանջումները	100.7
տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների	109.9
Համախառն կուտակում այդ թվում՝	111.4
հիմնական կապիտալի համախառն կուտակում	113.9
նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխություն	85.6
Ապրանքների և ծառայությունների զուտ արտահանում այդ թվում՝	x
արտահանում	112.7
ներմուծում	113.0
Վիճակագրական շեղում	x
<b>Համախառն ներքին արդյունք</b>	<b>111.9</b>



## Մեթոդաբանական ցուցումներ

Համախառն ներքին արդյունքն (ՀՆԱ) ազգային հաշիվների կարևորագույն ցուցանիշներից մեկն է, բնութագրում է երկրի տնտեսությունում արտադրված ապրանքների և ծառայությունների (հանած միջանկյալ սպառումը) արժեքը՝ նախատեսված վերջնական սպառման, կուտակման և զուտ արտահանման համար:

ՀՆԱ-ի դեֆլյատորն իրենից ներկայացնում է ընթացիկ գներով ՀՆԱ-ի հարաբերակցությունը դրա՝ նախորդ տարվա համադրելի գներով հաշվարկված ծավալի վրա:

ՀՆԱ-ն հաշվարկվում է երեք եղանակով՝ արտադրական, եկամուտների օգտագործման (ծախսային) և եկամուտների ձևավորման:

**Արտադրական եղանակով** ՀՆԱ-ն, շուկայական գներով, հաշվարկվում է տնտեսությունում արտադրված համախառն ավելացված արժեքի (հիմնական գներով) ու արտադրանքի և ներմուծման զուտ հարկերի (առանց սուբսիդիաների) հանրագումարով:

Հիմնական գներով ավելացված արժեքն արտադրության ցուցանիշ է, որը որոշվում է ապրանքների և ծառայությունների թողարկման ու միջանկյալ սպառման տարբերությամբ և չի ներառում արտադրանքի հարկերը, սակայն ներառում է արտադրանքի սուբսիդիաները:

**Եկամուտների օգտագործման եղանակով** հաշվարկված ՀՆԱ-ն իրենից ներկայացնում է ապրանքների և ծառայությունների վերջնական սպառման ծախսերի, համախառն կուտակման և զուտ արտահանման հանրագումար: Այն ցույց է տալիս, թե ինչպես են տնային տնտեսությունները, պետական հիմնարկները և տնային տնտեսություններն սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունները բաշխում իրենց տնօրինվող եկամուտը վերջնական սպառման և խնայողությունների միջև:

ՀՆԱ-ի հաշվարկն ըստ **եկամուտների ձևավորման աղբյուրների**, ԱՀՀ-ի շրջանակում կատարվող ՀՆԱ-ի հաշվարկման երեք եղանակներից մեկն է:

Համախառն ներքին արդյունք

Սակայն, այն անկախ հաշվարկ չի համարվում, քանի որ, ընդունված մեթոդաբանության համաձայն, եկամտային ոչ բոլոր ցուցանիշներն են ստացվում ուղղակի հաշվառմամբ, դրանց մի մասը հաշվարկվում է հաշվեկշռման եղանակով:

ՀՆԱ-ի ձևավորումն ըստ եկամուտների աղբյուրների արտացոլում է անմիջապես արտադրական գործընթացին մասնակցող միավորների, ինչպես նաև պետական հիմնարկների և տնային տնտեսություններն սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ստացված սկզբնական եկամուտները: Այս հաշվարկներում համախառն շահույթը (համախառն խառը եկամուտը) հանդիսանում է հաշվեկշռող հոդված և որոշվում է որպես արտադրական եղանակով հաշվարկված ՀՆԱ-ի (շուկայական գներով) և աշխատողների աշխատանքի վարձատրության և արտադրության ու ներմուծման գուտ հարկերի տարբերություն:

*Արտադրության հաշիվն* արտացոլում է անմիջականորեն արտադրական գործընթացին վերաբերվող գործառնությունները: Այս հաշվում որոշվում է ավելացված արժեքը, որը հանդիսանում է ՀՆԱ-ի հաշվարկման հիմքը:

*Թողարկումն* իրենից ներկայացնում է որոշակի ժամանակաշրջանում տնտեսությունում արտադրված ապրանքների և ծառայությունների ընդհանուր արժեքը:

*Միջանկյալ սպառումը* արտացոլում է արտադրության ընթացքում սպառվող կամ վերափոխվող ապրանքների և ծառայությունների արժեքը (բացառությամբ հիմնական ֆոնդերի, որոնք հաշվարկվում են որպես հիմնական կապիտալի սպառում): Այդ ապրանքները և ծառայությունները կարող են կամ լրիվությամբ սպառվել, կամ էլ վերափոխվել արտադրության գործընթացում:

Միջանկյալ սպառման կազմում առանձին ներառվում են ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունները:

Համախառն ներքին արդյունք

*Համախառն ավելացված արժեքը* հաշվարկվում է ըստ տնտեսական գործունեության տեսակների՝ որպես ապրանքների և ծառայությունների թողարկման ու միջանկյալ սպառման տարբերություն:

«Համախառն» արտահայտությունը ցույց է տալիս, որ ցուցանիշն իր մեջ ներառում է արտադրության գործընթացում հիմնական կապիտալի սպառման արժեքը:

*Ապրանքը* հանդիսանում է նյութական օբյեկտ, որի նկատմամբ գոյություն ունի պահանջարկ և կարող է հաստատվել սեփականության իրավունք: Սեփականության իրավունքը կարող է փոխանցվել մեկ ինստիտուցիոնալ միավորից մյուսին՝ շուկայական գործարքի իրականացման միջոցով:

*Ծառայությունները* հանդիսանում են տարաբնույթ գործունեության արդյունք, որն իրականացվում է սպառողի պատվերով և սովորաբար բերում է սպառող միավորի վիճակի փոփոխության:

*Արտադրության և ներմուծման զուտ հարկերը* ներառում են արտադրանքի և ներմուծման հարկերը, արտադրության այլ հարկերը: «Զուտ» արտահայտությունը նշանակում է, որ հարկերը ցույց են տրվում առանց համապատասխան սուբսիդիաների:

*Արտադրանքի հարկերը* ներառում են այն հարկերը, որոնց չափերը ուղղակիորեն կախված են թողարկված արտադրանքի և մատուցված ծառայությունների արժեքից՝ իրենց բնույթով դրանց կարելի է համարել անուղղակի հարկեր (ազգային հաշիվների համակարգում ընդունված չէ այդպիսի դասակարգման կիրառումը): Դրանց թվին են դասվում ավելացված արժեքի հարկը, ակցիզները և այլն: Ներմուծման հարկը դա ներմուծվող ապրանքներից և ծառայություններից գանձվող հարկն է:

*Սուբսիդիաները* անհատույց ընթացիկ վճարներ են, որոնք պետբյուջեի միջոցներից հատկացվում են ձեռնարկություններին՝ կապված ապրանքների և ծառայությունների արտադրության, վաճառքի կամ ներմուծման հետ:

Համախառն ներքին արդյունք

*Արտադրության այլ հարկերն* արտադրության գործոնների (հող, կապիտալ, աշխատանք) օգտագործման հետ կապված հարկերն են: Դրանց թվին են դասվում հողի, արտադրության մեջ օգտագործվող շենքերի ու սարքավորումների (հիմնական միջոցների) հարկերը, լիցենզիաների դիմաց վճարները, համանման այլ գանձումները: Դրանք կախված չեն արտադրության ծավալներից և չեն ներառում ստացած շահույթից և այլ եկամուտներից հաշվարկված հարկերը:

*Եկամուտների ձևավորման հաշիվը* եկամուտների սկզբնական բաշխման հաշվի բաղկացուցիչ մասն է: Այն արտացոլում է անմիջականորեն ապրանքների ու ծառայությունների արտադրությանը մասնակցող կառուցվածքային ռեզիդենտ-միավորների կողմից վճարած սկզբնական եկամուտները:

*Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրությունն* իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանում վարձու աշխատողի կողմից կատարած աշխատանքի դիմաց կազմակերպության կամ ֆիզիկական անձի կողմից վճարած դրամական և բնեղեն բոլոր վարձատրությունների հանրագումարը:

Աշխատողների աշխատանքի վարձատրությունը հաշվառվում է հաշվեգրված գումարներով և իր մեջ ընդգրկում է նաև սոցիալական ապահովության հատկացումները, եկամտային հարկը, այլ վճարները, որոնք աշխատողների կողմից ենթակա են վճարման:

*Տնտեսության համախառն շահույթը և համախառն խառը* եկամուտները իրենցից ներկայացնում են ավելացած արժեքի այն մասը, որ մնում է արտադրողների մոտ վարձու աշխատողներին աշխատանքի վարձատրության հետ կապված ծախսերը և արտադրության հարկերը հանելուց հետո (ներառում է ամորտիզացիոն մասհանումները):

Համախառն շահույթը իր մեջ չի պարունակում աշխատանքի վարձատրության տարր, ինչպես նաև գործուղումների, ներկայացուցչական ծախսերի գերնորմատիվային վճարումները, չի ընդգրկում ակտիվների գների

Համախառն ներքին արդյունք  
բարձրացման արդյունքում ձևավորված շահույթը: Այն ներառում է հիմնական  
կապիտալի սպառումը:

*Համախառն խառը եկամուտը* աշխատանքի վարձատրության տարր է, որը  
հնարավոր չէ առանձնացնել ձեռներեցի կամ սեփականատիրոջ եկամտից:

*Վերջնական սպառման ծախսերը* ձևավորվում են տնային  
տնտեսությունների, տնային տնտեսություններն սպասարկող ոչ առևտրային  
կազմակերպությունների, ինչպես նաև կոլեկտիվ և անհատական  
ծառայությունների ու ապրանքների համար կատարված պետական հիմնարկների  
վերջնական սպառման ծախսերից: Այսպիսի խմբավորումը ցույց է տալիս, թե ով է  
ֆինանսավորում վերջնական սպառման ծախսերը:

*Տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերը* ներառում են  
տնային տնտեսությունների այն ծախսերը, որոնք ուղղված են բոլոր առևտրական  
կազմակերպություններում, քաղաքային շուկաներում և չկազմակերպված  
(փողոցային) առևտրի վայրե թում, կենցաղային և բնակարանային-կոմունալ  
սպասարկման, ուղևորատար տրանսպորտի, կապի, հյուրանոցների, մշակույթի,  
առողջապահության և կրթության առևտրային հիմնարկներում՝ սպառողական  
ապրանքների և ծառայությունների ձեռքբերմանը, ինչպես նաև այն ծախսերը,  
որոնք ուղղված են տնային տնտեսությունների կողմից սեփական սպառման  
համար արտադրված և որպես աշխատանքի վարձատրություն բնեղեն տեսքով  
ստացած ապրանքների և ծառայությունների սպառմանը (բնակչության անձնական  
օժանդակ տնտեսությունների գյուղատնտեսական արտադրանքը, սեփական  
կացարանում ապրելու պայմանականորեն չափվող ծառայությունները):

*Պետական հիմնարկների կողմից անհատական բնույթի ապրանքների և  
ծառայությունների վերջնական սպառմանն ուղղված ծախսերը* բաղկացած են  
պետական հիմնարկների կողմից անհատական սպառման համար նախատեսված  
սպառողական ապրանքների և ծառայությունների ձեռք բերման համար կատարած  
ծախսերից: Այսպիսի ծախսերը ֆինանսավորվում են պետական բյուջեի և  
արտաբյուջետային միջոցների հաշվին:

Համախառն ներքին արդյունք

*Պետական հիմնարկների կողմից կոլեկտիվ բնույթի ծառայությունների վերջնական սպառմանն ուղղված ծախսեր*, այս ցուցանիշը տարբերվում է նախորդից նրանով, որ այստեղ հաշվի են առնվում պետական բյուջեի հաշվին կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունները, որոնք բավարարում են ոչ թե առանձին տնային տնտեսությունների, այլ ամբողջ հասարակության պահանջմունքները (ծախսեր, որոնք ուղղված են պաշտպանությանը, կառավարմանը, ճանապարհային տնտեսությանը, բյուջեի և արտաբյուջետային միջոցների հաշվին վճարվող գիտական գործունեությանը, կոմունալ տնտեսությանը, գյուղատնտեսությունը սպասարկող կազմակերպությունների ծառայությունների մատուցմանը):

*Տնային տնտեսություններն սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների վերջնական սպառման ծախսերը* տնային տնտեսություններին անվճար տրամադրվող սպառողական ապրանքների ու ծառայությունների համար հասարակական կազմակերպությունների կողմից կատարած ծախսերն են: Դրանց մեջ ներառվում են նաև կազմակերպությունների կողմից իրենց աշխատողներին կրթության, առողջապահության և մշակույթի ոլորտում մատուցված անվճար ծառայությունները:

*Հիմնական կապիտալի համախառն կուտակումն* իրենից ներկայացնում է ռեզիդենտ-միավորների կողմից միջոցների ներդրումը հիմնական կապիտալ հանդիսացող օբյեկտներում՝ արտադրության մեջ դրանք օգտագործելու ճանապարհով ապագայում նոր եկամուտ ստեղծելու նպատակով:

*Նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխությունն* ընդգրկում է արտադրական պաշարների, անավարտ արտադրության, պատրաստի արտադրանքի և վերավաճառքի համար նախատեսված ապրանքների պաշարների փոփոխությունը: Տվյալ ժամանակահատվածի ընթացքում պաշարների արժեքի փոփոխությունը հաշվարկվում է որպես այդ ժամանակաշրջանի վերջին և սկզբին առկա պաշարների արժեքների տարբերություն՝ գնահատված դիտարկվող

Համախառն ներքին արդյունք  
Ժամանակահատվածի միջին շուկայական գներով՝ գների ազդեցությունը  
չեզոքացնելու նպատակով:

*Արտադրական և ծախսային եղանակներով հաշվարկված ՀՆԱ-ի  
մեծությունների միջև վիճակագրական շեղումը* ցույց է տալիս տարբեր  
եղանակներով հաշվարկված ՀՆԱ-ի մեծությունների միջև շեղումը: Արտադրական  
եղանակով և եկամուտների օգտագործման եղանակով հաշվարկված հաշիվների  
յուրաքանչյուր մասը ձևավորվում է ինքնուրույն՝ վիճակագրական  
տեղեկատվության սեփական հոսքերի հիման վրա, որի հետևանքով դրանց  
վերաբերյալ հանրագումարները կարող են միմյանցից որոշ չափով տարբերվել:

## Համախառն ներքին արդյունք